ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի N 711-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1. Մարզի Այգուտ համայնքի ակտիվ սողանքային գոտում գտնվող բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրներն ուսումնասիրելու և ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցերը քննարկելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Մուշեղյան Յու. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ, նախագահ

   Բիձյան Հ . - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ

   Բուդումյան Խ.. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ

   Գաբրիելյան Հ. – մարզի Այգուտ համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

2. Հանձնաժողովին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հավակնող անձանց աջակցություն տրամադրելու պայմանագրերի կնքման գործընթացն ավարտել ս/թ դեկտեմբերի 20-ին:
3. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել ինձ:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ